ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
Լ.ԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Լ.Եռնանիստ գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

24 օգոստոսի 2011թ. գյուղ Լ.Եռնանիստ

2011 թվականի օգոստոսի 24 -ին տեղի է ունեցել Լ.Եռնանիստ գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ՝

1. Իսահակ Մելքոնյան
2. Վարդգես Հայրապետյան
3. Գենադի Ավագյան
4. Մանուչար Խաչատրյան
5. Նորիկ Վարդանյան
6. Մեխակ Նազարյան
7. Գագիկ Մկրտչյան

Համայնքի ղեկավարի աշխատակզմից՝

1. Սուսաննա Բարեղամյան
2. Արթուր Մկրտչյան
3. Արայիկ Գաբրիելյան
4. Գեղեցիկ Երեմյան
5. Էլյանորա Հայրապետյան
6. Աստղիկ Հարությունյան
7. Սոֆիկ Աբրահամյան
8. Մադոննա Արշակյան
9. Լուսիկ Հակոբյան

Համայնքի բնակիչներ՝ 100 հոգի, դպրոցի ուսուցիչներ՝ 28 հոգի

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ հարցեր

1. Մանկապարտեզի հիմնովին վերանորոգման մասին
2. Գյուղամիջյան ճանապարհների ընթացիկ նորոգման մասին.
3. Մանկապարտեզին որոշակի գույքով ապահովման մասին.
4. Փողոցների լուսավորության մասին.
5. Խմելու ջրի աղբյուրների ընթացիկ վերանորոգման մասին
6. Դաշտամիջյան ճանապարհները երթևեկելի դարձնելու աշխատանքների մասին.

ԼՍԵՑԻՆ

Համայնքի ղեկավար՝ Ա.Արշակյանը համառոտ ներկայացրեց կատարած աշխատանքների մասին
Համայնքի ղեկավարը նշեց, որ 2011 թվականի համար նախատեսված աշխատանքները կատարվել են, իսկ գյուղամիջյան ճանապարհների նորոգում էլ ընթացքի մեջ է:

Դրական տեղաշարժերն ակներև են նաև ժողովրդագրության ոլորտում: Համայնքը երիտասարդանում է: Համայնքի ղեկավար Ա. Արշակյանը դրական է գնահատում վերջին տարիներին ծնունդների թվի աճի փաստը: Արդյունքում՝ նախադպրոցականների բանակը Լեռնանիստում այսօր հասնում է -180-ի, իսկ մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը հասնում է -100-ի:
Համայքնի ղեկավարը Ա.Արշակյանը ցանկություն հայտնեց դպրոցի վերանորոգման մասին: Գյուղում գործում է բուժկետ:

Չհաշված մշտական աշխատանքով ապահովվածների աշխատավարձը, եկամտի հիմնական աղբյուրը մնում է գյուղատնտեսությունը: Առաջնային ճյուղերից մեկի՝ հացահատիկի մշակության համար տարին այստեղ էլ անբարենպաստ է եղել:
Գյուղտեխնիկայի պակաս չի զգացվում: Դեռ ավելին՝ ունեցած տեխնիկան թույլ է տալիս գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնել սահմանված ժամկետներում: Նախորդ տարվա 100 հեկտարի դիմաց այս տարի 120 հեկտար աշնանացան է կատարվել:
Գյուղատնտեսությունը, հատկապես՝ հողագործության բնագավառում դժվար է բարձր բերքատվություն ստանալու մասին խոսել: Լեռնանիստում ցածր բերքատվության հիմնական պատճառը պարարտանյութերի բարձր գներն են, որոնց գնաճի պատճառով գյուղացին զերծ է մնում մինչև վերջ կատարելու հողի մշակման գործընթացը:

Ուրախալի քիչ բան կա նաեւ անասնապահության ոլորտում. գլխաքանակի էական անկում է գրանցվել ինչպես խոշոր, այնպես էլ մանր եղջերավոր կենդանիների մասով:

Համայնքային բյուջեն բնութագրող թվերը հուսադրող են. չնայած տարին անբարենպաստ է եղել գյուղատնտեսական աշխատանքների համար, այնուամենայնիվ, հաջողվել է ապահովել նախանշված մուտքերը:

Եռամյա ծրագրով նախատեսված կատարվելիք աշխատանքների մասին

2011 թվականի երրորդ առամսյակի բյուջեի կատարողականի մասին

	2011 թվական		
	պլան	կատարող	%
Հողի հարկ	3866.5	3871.3	100.12
Գույքահարկ	1900.0	2382.3	125.38
Տեղական տուրք	300.0	337.0	112.33
Հողի վարձավճար	850.0	107.8	119.74

Համայնքի ղեկավարը բնակիչներին ծանոթացրեց հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքին

ԵԼՈՒՅԹՆԵՐ

Լեռնանիստի միջն. դպրոցի տնօրեն՝ Հայկ Հայրապետյանը հարց բարձրացրեց դպրոցի վերանորոգման հարցի շուրջ :

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1. Համայնքի բնակիչ՝Ա.Մկրտչյանը շատ կարևոր հարց բարձրացրեց սեփականատերերի կողմից չօգտագործվող հողերի ետ վերադարձրած վկայականների համար գումարի մուծման անհնարինության մասին և խնդրեց հարց բարձրացնել կառավարության առջև, վերանայել այդ հարցը:

ՈՐՈՇՎԵՑ

1. Համայնքի ղեկավարի հաշվետվությունն ընդունել ի գիտություն .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐՇԱԿՅԱՆ